ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022 թվականի հունիսի 6-ից 9-ը

Հունգարիա (ք. Բուդապեշտ) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

1) Աշոտ Միրումյան

2) Լիանա Մովսիսյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

1) ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչարարության մեթոդաբանության և ընթացակարգերի վարչության հարկերի և պարտադիր վճարների մեթոդաբանության թիվ 1 բաժնի հարկային տեսուչ,

2) ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հարկային տեղեկատվության և ռիսկերի վերլուծության վարչության կամերալ ուսումնասիրությունների և վերլուծության թիվ 3 բաժնի ավագ հարկային տեսուչ:

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Հունգարիա, ք. Բուդապեշտ, հունիսի 6-ից 9-ը:

4. Հրավիրող կողմը՝

Հարկային Մարմինների Ներեվրոպական Կազմակերպություն (IOTA):

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ-ի) խարդախությունների դեմ պայքարին նվիրված համաժողովին մասնակցելու նպատակով:

6. Քննարկված թեմաները՝

Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել տարբեր երկրներում առկա ԱԱՀ-ի խարդախությունների սխեմաներին, հատկապես հաճախ հանդիպող՝ առցանց հարթակներով ծառայությունների մատուցման և ապրանքների մատակարարման գործարքներին, էլեկտրոնային խաղերի ստեղծման և առցանց վաճառքի գործարքներին, ինչպես նաև ներկայումս բավականին արդիական՝ կրիպտոարժույթների և NFT-ների առևտրին: Քննարկվել են նաև հարկային մարմինների միջև տեղեկատվության փոխանակումն արդյունավետ կազմակերպելու, ինչպես նաև էլեկտրոնային վճարային

համակարգերի (PayPal, AliPay, Skrill, WebMoney, WeChat) միջոցով կատարվող վճարումների վերահսկման մեխանիզմները: Անմասն չեն մնացել նաև ավանդական ԱԱՀ-ի խարդախությունները՝ կեղծ փաստաթղթաշրջանառությունները, որոնք տալիս են շուկայական մրցակցային առավելություններ խարդախություն իրականացնող տնտեսվարողներին: Այնուամենայնիվ, երկրների միջև երկկողմ համագործակցության շրջանակներում հնարավոր է լինում բացահայտել և կանխել կեղծ փաստաթղթաշրջանառությունները: Տնտեսական Համագործակցության և Զարգացման Կազմակերպության (OECD) կողմից ներկայացվել է նաև ԱԱՀ-ի խարդախություններին ուղղված ստանդարտներն ու ուղեցույցները, ինչպես նաև հաճախ հանդիպող ԱԱՀ-ի նմանատիպ խարդախությունների բացահայտմանն ուղղված ռազմավարություններն ու կանխարգելիչ գործողությունները:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Կայացել են հանդիպումներ Հարկային Մարմինների Ներեվրոպական Կազմակերպության անդամ երկրների ներկայացուցիչների հետ, որոնց ընթացքում քննարկվել են նոր ԱԱՀ-ի խարդախությունների հայտնաբերման, բացահայտման և կանխարգելման հետ կապված հարցեր:

Ելույթ են ունեցել Տնտեսական Համագործակցության և Զարգացման Կազմակերպության (OECD) ներկայացուցիչը, Եվրոպական հանձնաժողովի Խարդախության Դեմ Պայքարի Գրասենյակի (OLAF) ներկայացուցիչը, Եվրոպական հանձնաժողովի Հարկային և Մաքսային Միություն (TAXUD) ներկայացուցիչը, ինչպես նաև Հարկային Մարմինների Ներեվրոպական Կազմակերպության (IOTA) անդամ երկրների ներկայացուցիչներ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Հանդիպման արդյունքում պայմանավորվածություններ են ձեռք բերվել առաջիկա դասընթացների և համաժողովների կազմակերպման մասով, որոնք ուղղված կլինեն Հարկային Մարմինների Ներեվրոպական Կազմակերպության (IOTA) անդամ երկրների միջև համագործակցության բարելավմանը, տեղեկատվության արագ և օպերատիվ փոխանակմանը, ինչպես նաև նոր խարդախությունների բացահայտմանը:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Առաջիկա դասընթացները և համաժողովները կազմակերպվելու են Հարկային Մարմինների Ներեվրոպական Կազմակերպության (IOTA) կողմից: Հետագա դասընթացները և համաժողովները տեղի կունենան ոչ միայն մասնակիցների ֆիզիկական ներկայությամբ, այլ նաև առցանց ձևաչափով:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

Աշոտ Միրումյան

Լիանա Մովսիսյան

13.06.2022թ.